ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1952 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Վ. Աբրահամյան

ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի արհեստները, դրանց թվում ոսկերչությունը, քիչ են ուսումնասիրված։ Առավել քիչ է ուսումնասիրված ոսկերչության տեխնիկան։

Ուսումնասիրել հին Հայաստանի արհեստները, նշանակում է պարզել Հայաստանի տնտեսության և կուլտուրայի հետ կապված մի շարք հարցեր. Անհրաժեշտ է ոչ միայն իմանալ, թե արհեստագործության ինչպիսի ճյուղեր են եղել, այլև այն, թե դարերի ընթացքում արհեստի յուրաքանչյուր ճյուղի համար ինչ տեխնոլոգիա է մշակվել, քանի որ վերջինս ավելի որոշակիորեն ցույց է տալիս արհեստների զարգացման աստիճանը։

Հայ և օտար պատմիչների վկայություններից երևում է, որ Հայաստանը հարուստ է եղել ոչ միայն երկաթի, պղնձի, այլև ոսկու, արծաթի հանքերով։ Հնագիտական նյութերն էլ ցույց են տալիս, որ մետաղամշակումը հայկական բարձրավանդակի բնիկների մոտ գոյություն է ունեցել դեռևս հնագույն դարերում և հանդիսացել է ամենակարևոր և ամենից շատ տարածված ու զարգացած արհեստի ճյուղերից մեկը։

Երբ Հայաստանում դեռևս քաղաքային կյանքը զարգացած չէր, մետաղագործ արհեստավորը պատրաստում էր թե՛ գյուղատնտեսական իրեր՝ գութան, բահ, մանգաղ, քլունգ, թե՛ տնային գործածության իրեր և թե՛ սառը զենքեր ու զարդեր։

Հետագայում, 9-րդ դարից հետո, քաղաքային կյանքի զարգացման հետևանքով բուռն վերելք է ապրում նաև արհեստագործությունը։ Խորանում է արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և արհեստների առանձին ճյուղերի մասնագիտացումը։ Ոսկերիչ վարպետները պետք է բավարարեին ազնվականության և գերազանցապես քաղաքային դասի աճող պահանջները՝ պատրաստելով ամեն տեսակի մետաղյա զարդեր ու իրեր, թե՛ տեղական շուկայի և թե՛ արտահանման համար։ Եթե առաջ դարբինն ինքն էր միայն պատրաստում երկաթյա, պղնձյա և նույնիսկ արծաթյա ու ոսկյա բազմատեսակ իրեր ու զարդեր, այժմ նա հազիվ հնարավորություն ուներ բավարարելու գյուղատնտեսական գործիքների աճած պահանջները։ Աշխատանքի բաժանման հետևանքով առաջանում են արհեստի առանձին ճյուղեր՝ «կողպայքարարներ» (փականագործներ), պայտարներ, «սլեհարարներ» (զինագործներ), ոսկերիչներ և այլն։ Պարզ է, որ «կողպայքարարը», «սլեհարարը», պայտարը և ոսկերիչն արդեն այլևս չեն զբաղվում գյուղատնտեսական գործիքներ պատրաստելով։

Արհեստների մասնագիտացման համար, որպես լավագույն տեղեկատու կարող է ծառայել Երևանի Պետական Մատենադարանի № 695 ձեռագիրը։

Այս ժողովածուի 187 էջում զետեղված է 1221 թվականին արաբերենից հայերենի թարգմանված մի երազահանի հատվածը, որտեղ կան հարուստ տեղեկություններ 13-րդ դարի արհեստների մասին։ Այնտեղ արտահայտված է նաև բնակչության կարծիքն այս կամ այն արհեստի և արհեստավորի վերաբերյալ։ Հետաքրքրական է այդ փաստաթղթում մետաղագործությանը վերաբերող հատվածը.

«Զինչ արուէստ կա, որ կու բանի հանց ասեն դարբին տեսանես յերազի մեծ մարդ է... սլեհարար հանց լինի որ օգնական է... նալբանդն յայլոցն լաւարար մարդ լինի. կողպայքարարը առաջնորդ մարդ լինի... պղնձագործն հաւատացեալ մարդ է և շարչարկոտ... ոսկերիչն՝ ստախօս»[1]։

Այս քաղվածքից որոշակի գաղափար կարելի է կազմել 13-րդ դարում գոյություն ունեցող մետաղամշակման առանձին ճյուղերի մասին։

Ոսկերիչ արհեստավորները, ոչ միայն հնում, այլև 17—19-րդ դարերում զարդեր կամ այլ իրեր պատրաստելու ժամանակ, բացի ոսկուց և արծաթից օգտագործել են նաև պղինձ, վարշաղ և այլ նյութեր, որոնցից պատրաստված զարդարանքներն էժան և մատչելի էին ժողովրդի հասարակ խավերին։

Ոսկերիչները մշակել էին ոսկուց, արծաթից իրեր, զարդեր պատրաստելու մի շարք տեխնիկական ձևեր ու եղանակներ, որոնց ծանոթացնելուն է նվիրված սույն հոդվածը։

Զուլման տեխնիկան.— Ինչպես մետաղագործության մյուս ճյուղերում, այնպես էլ ոսկերչության մեջ արդուզարդերի և իրերի որոշ մասը պատրաստել են ձուլման եղանակով, որը գոյություն ուներ դեռևս բրոնզե դարում։ Զուլման եղանակը ոչ միայն հին է, այլև եղել է գերիշխող։ Այդ մեթոդով աշխատել են թե՛ գյուղական դարբինները, որոնք միաժամանակ ոսկերչի գործ էին կատարում. և թե՛ գղյակներում, վանքերում ու քաղաքներում կենտրոնացած ոսկերիչ արհեստավորները։ Զուլման համար ոսկերիչ վարպետներն օգտագործել են տարբեր տեսակի կաղապարներ։ Կաղապարներից հնագույնը, որն օգտագործվել է բրոնզե դարում, պատրաստվում էր քարից կամ կավից։

Քարե կաղապարները լինում էին մեկ երեսանի և երկու երեսանի։ Այն իրերը կամ զարդերը, որոնց մի կողմը հարթ էր և պարզ, ձուլում էին մեկ երեսանի քարե կաղապարով։ Ոսկերիչ վարպետը սկզբից քարի վրա փորում էր ձուլվող իրի մոդելը, որը բավականին բարդ և դժվարությունների հետ կապված աշխատանք էր։ Մոդելը պատրաստելուց հետո ձուլվածքը լցնում էր կաղապարի վրա եղած հատուկ անցքից, որ մեծ մասամբ լինում էր ձագարաձև։ Շատ հաճախ մեկ երեսանի քարե կաղապարներն իրենց վրա չէին ունենում ձուլվածքը լցնելու նման հարմարանք, այդ դեպքում հալած հեղուկ լցնող անոթն իր վրա ունենում էր այնպիսի հարմարանք, որը հնարավոր էր դարձնում հալված մետաղը պահանջված չափով լցնել կաղապարի մեջ։

Մինչև այժմ հայտնի հնագույն կաղապարը հայտնաբերվել է Շնդավիթի 1937 թ. պեղումներից, դա պատկանում է 2-րդ հազարամյակի սկզբներին (ն. թ. մ. թ.)։ 1936 թ. Մուխաննաթ-Թափայի պեղումների ժամանակ վերին շերտում ջարդված ամանի մեջ պրիմիտիվ մի հնոցի կողքին գտնվեց մի կաղապար, որով ձուլել են մեդալիոն, հերուն և կրծքի զարդ[2]։

[1] Սրեանի Պետական Մատենադարանի № 695 ձեռագիր, էջ 187։

[2] Տեղեկագիր Պատմության և գրականության ինստիտուտի, առաջին գիրք։ 1938, էջ 214։

Սակր ձուլելու կաղապարներ գտնվել են Կարմիր բլուրից և Լենինականի մսի կոմբինատի շինարարական աշխատանքների ժամանակ բացված հնավայրերից։

Դամբարաններից հայտնաբերված իրերը ցույց են տալիս, որ կանացի զարդարանքները, սակրերը, սառը զենքերից՝ փոքր և մեծ նիզակները, նետերը, դաշույններն իրենց դաստակներով, բրոնզյա գուրզերը, ձիու սանձի մասերը, արձանիկները, կրծքի կապիչները, բուրգաձև մատանիները և այլ իրեր պատրաստվել են ձուլման եղանակով՝ կրկնափեղկ կաղապարի միջոցով, որոնք անպայման ունեցել են մետաղյա հեղուկ լցնելու համար ձագարաձև հարմարանք։





Նկ. 1

1. Կաղապար Շնդավթի սեղուծներից։
2. Կաղապար՝ ուլունք, medալիոն և հերուն ձուլելու համար (Մուխաննաթ-Թափայից)։
3. Կաղապար սակրի (Լենինականից)։
4. Կաղապար սակրի (Կարմիր բլուրից)։

Նկար Ա. Պատրիկի

Միջնադարյան Հայաստանում ոսկերչության մեջ, բացի քարե կաղապարից, շատ տարածված և գործածական էր նաև այն կաղապարը, որը պատրաստվում էր հատուկ հողից և գործածվում էր մինչև մեր օրերը։ Այդ կաղապարը պատրաստելու համար վերցնում էին մետաղից պատրաստված 6—8 սմ բարձրություն ունեցող փոքրիկ քառանկյունի արկղիկ՝ համապատասխան կափարիչով, դրա մեջ լցնում էին հատուկ մոխրագույն հող։ Ոսկերիչ վարպետը ցանկացած իրի համար պատրաստում էր մոդելներ՝ կապարից, պղնձից և մոմից։ Բարդ հատիկավոր զարդարանքներ պատրաստելիս անպայման օգտագործում էին մոմից պատրաստած մոդելներ։

Եթե ոսկերիչը ցանկանում էր ձուլել ձեռքի ապարանջան, մատանի կամ խաչ և այլ իրեր, վերցնում էր հատուկ հողով լցված կրկնափեղկ արկղը, ապա կապարից կամ պղնձից պատրաստած մոդելի միջոցով հողի վրա հանում էր պահանջվող զարդերի պատճենը, այնուհետև կաղապարի վրա եղած ձագարաձև անցքից լցնում մետաղյա հեղուկը՝ հրակայուն կավից պատրաստված տարբեր մեծության անոթներից։ Կաղապարի մեջ լցրած հեղուկ ձուլվածքը թողնվում էր մինչև սառչելը, որից հետո ոսկերիչը հանում էր պատրաստի իրը և ցանկացած դեպքում հատուկ գործիքներով նրա վրա փորագրում պահանջվող նախշերը։



Նկ. 2

1. Մետաղյա կաղապար։
2. Ոսկերչի հայոց այժմյան տիպի։
3. Ոսկերչի հայոց Դվինից։
4. Կաղապար ձողերի համար։

Նկար Ա. Պատրիկի

Հողի կաղապարի միջոցով հնարավոր էր կարճ ժամանակամիջոցում ձուլել մեծ քանակությամբ զարդեր և այլ իրեր։ Ձուլման տեխնիկայով հն պատրաստված Կիրովականի թագավորանիստ կոչված վայրի դամբարաններից գտնված մի արծաթյա ապարանջան և ոսկյա մի մատանի, որն իր վրա ունի չորս ոսկյա գնդիկներ՝ ակի փոխարեն։ Այդ ապարանջանը և մատանին գտնվում են Պետական Պատմական թանգարանում (№ № 1533 և 1544)։ Նույն եղանակով է պատրաստված մարդկանց և կենդանիների արձանիկները բրոնզից, ինչպես, օրինակ, Ադիյամանի իշխանական դամբարանում գտնված

բրոնզյա եղջերուն, Վանում գտնված կնոջ կերպարանքով արձանիկը, Կարմիր բլուրում գտնված Թեյշեբա աստծու արձանիկը և շատ ուրիշ արձաններ։

Նյութական կուլտուրայի մնացորդները հաստատում են, որ ձուլման եղանակը ոսկերչության մեջ լայն չափով կիրառվել է նաև միջնադարում։ Եկեղեցական մեծ և փոքր խաչերի, սկիհների, զանազան անոթների և նրանց վրա եղած վերադիր նախշերի մեծ մասը ձուլածո են։ Ձուլածո խաչերի բազմաթիվ օրինակներ գտնվել են Անիի պեղումներից, որոնք պատրաստված էին թե՛ պղնձից, և թե՛ արծաթից։ Այդ խաչերից շատերի վրա ոսկերիչ վարպետը ձուլելուց հետո կատարել է փորագրություններ և կամ թանկարժեք քարերով զարդարել է դրանք։

1949 թվականին՝ Դվինի պեղումների ժամանակ, Կաթողիկեի հարավարևելյան կողմում գտնվեց արծաթյա մի խաչ, որի չորս թևերի անկյունների վրա կան գնդիկանման հավելվածներ, որոնք հաստատում են, որ այդ խաչը պատրաստված է ձուլման եղանակով։ Արծաթյա խաչի հետ գտնվեցին նաև արծաթից երկու մատանիներ, նույնպես պատրաստված ձուլման եղանակով։

9-րդ դարից հետո ձուլման տեխնիկայով պատրաստվել են կանացի զարդարանքների մեծ մասը, որովհետև շուկայի համար անհրաժեշտ էին արագ պատրաստվող և ստանդարտ իրեր, որոնց պահանջը զգում էր ոչ միայն ազնվական դասը, այլև քաղաքի, մասամբ և գյուղի բնակչությունը։ Մեծ քանակությամբ ձուլածո զարդեր ունենք թանգարանում, որոնք պատկանում են 17—19-րդ դարերին։ Ձուլման եղանակով են պատրաստված այն բոլոր բրոնզյա, երկաթյա, արծաթյա և ոսկյա մատանիները, որոնց ակն ագուցանելու մասը հաստ էր և բուրդաձև։

1951 թվականին՝ ընկ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ Գառնիում կատարված պեղումների ժամանակ գտնվել են արծաթյա գեմմա մատանիներ, որոնք նույնպես պատրաստվել են ձուլման եղանակով և ծառայել են որպես կնիք վավերագրեր, մուրհակներ և նամակներ կնքելու համար։ Այդպիսի մատանիների ակի մասերը բուրգաձև են և կողքից ունեն ոսկուց պատրաստված գնդաձև հավելվածք՝ բավականին դուրս ընկած ձևով, որը հեշտացնում է կնքելը։ Նման ոսկյա մի մատանի, որ պատկանում է 16-րդ դարին, գտնվել է 1937 թվականին Նորագավթում՝ հողային աշխատանքների ժամանակ։ Այս մատանին ունի մեծ քառանկյունի սպիտակավուն ակ, որի վրա հայերեն տառերով գրված մակագրությունից երևում է, որ սեփականություն է եղել հարուստ մի հայ վաճառականի և ծառայել է վավերագրեր և մուրհակներ կնքելու համար։

Ձուլման եղանակով են պատրաստված մեր ձեռագրերի արծաթյա կապերի որոշ մասը և հատկապես նրանց վրա եղած վերադիր զարդերը, որոնք մեծ մասամբ բուսական օրնամենտներ և կրոնական դիմանկարներ են։ Պետք է նշել, նաև, որ անկախ այն բանից, թե ինչ տեխնիկայով են պատրաստված այդ արծաթյա կազմերը, բոլոր դեպքերում վարպետներն աշխատել են նրանց վրա դնել ձուլածո զարդեր և պատկերներ։

Բազմաթիվ օրինակներից անհրաժեշտ է հիշել մի քանի ձեռագրեր, որոնց վրա օգտագործվել են ձուլված վերադիր զարդեր, ինչպես, օրինակ, № 5592 ձեռագիրը, որ պատրաստված է գրվագման եղանակով և իր վրա ունի վերադիր նախշեր՝ կրոնական պատկերներ և բուսական զարդեր։ Նույնանման

Ձուլածո վերադիր զարդեր մենք տեսնում ենք նաև № 5651 ձեռագրի արծաթյա կազմի և № 7775 (սեադի), № 6763 (էմալի) արծաթյա կազմերի և բազմաթիվ այլ ձեռագրերի կազմերի վրա։ Այդ վերադիր զարդերը և դիմանկարները մասսայական ձևով պատրաստվում և օգտագործվում էին ոչ միայն ձեռագրերի կազմերը, այլև եկեղեցական սպասները, վակասները, մեռոնի ամանները, ցնձուղները, քուրվառները զարդարելու համար։

Կռելու և դրվագման տեխնիկան.— Հին Հայաստանում ոսկերիչ արհեստավորները ձուլման տեխնիկայի հետ միասին կիրառել են նաև կռելու և դրվագելու տեխնիկան։ Այս տեխնիկայի հնագույն լինելը հաստատվում է քարակղե դամբարաններից հայտնաբերված իրերով և զարդերով։ Եթե ձուլման եղանակով որևէ իր կամ զարդ պատրաստելու ժամանակ պահանջվում էր մեծ քանակությամբ մետաղ, ապա դրվագման միջոցով ոսկյա կամ արծաթյա իրեր ու զարդեր պատրաստելու ժամանակ գործածվում էր ավելի քիչ քանակությամբ ազնիվ մետաղ և ստացվում էր ավելի շատ իր, որովհետև ոսկերչի մուրճի հարվածների տակ ոսկյա, արծաթյա կամ պղնձյա թերթիկներն ավելի նրբանում և խտանում էին։

Կռելու և դրվագման տեխնիկան սերտորեն կապված են իրար հետ. սկզբում ոսկերիչը կամ արծաթագործը կռելու միջոցով պետք է պատրաստեր դրվագման ենթակա իրի կմախքը և ապա անցներ արտաքին գեղարվեստական ձևավորմանը։ Շատ հաճախ պատրաստում էին այնպիսի իրեր, որոնք պահանջում էին միայն կռելու աշխատանք և հարկ չէր լինում արտաքին ձևավորման։ Կռելու տեխնիկայով են պատրաստվել ոչ միայն զենքեր ու գյուղատնտեսական գործիքներ, այլև կանացի զարդերի որոշ մասը, ինչպես, օրինակ. ապարանջաններ, հատկապես լայն տեսակի, կրծքի զարդեր, ափսեներ. բաժակներ և անգամ եկեղեցական իրերի մի մասը՝ սկիհներ, մեռոնի ամաններ և այլն։

Ոսկերչության մեջ դրվագման ամենահնադույն օրինակը հայտնաբերվել է Կիրովական քաղաքում 1948 թվականի շինարարական աշխատանքի ժամանակ բացված կուրգանում*։ Այդ պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսին պատկանող մի շարք իրեր և զենքեր՝ բրոնզից, կավից և քարից, որոնց հետ գտնվեցին նաև ոսկուց և արծաթից պատրաստված տարբեր ձևի անոթներ։ Այդ անոթների թվին պատկանող մի ոսկյա բաժակի վրա ոսկերիչ վարպետը դրվագել էր 6 առյուծների քանդակներ

Անհրաժեշտ է նշել, որ դրվագման տեխնիկան կապված է մեծ դժվարությունների հետ և պահանջում է փորձառություն և համբերատարություն։ Ոսկերիչ վարպետները դրվագումը կատարում էին հատուկ գործիքներով և տարբեր մուրճերով, հատկապես արծաթյա իրերի դրվագման ժամանակ, որն ավելի տարածված էր։ Այսպես, բաժակները, ափսեները, սափորները, զանազան տեսակի տուփեր, կանայի գլխի թասակներ և կրծքի զարդարանքների մեծ մասը պատրաստում էին արծաթից, որը համեմատաբար էժան էր և մատչելի շուկայական սպառման համար։ Ոսկերիչը ոսկին օգտագործում էր այն ժամանակ. երբ թագավորների, իշխանների, առևտրական դասի հարուստ ներկայացուցիչների կողմից տրվում էր հատուկ պատվեր։

* Պեղման աշխատանքները ղեկավարել է Բ. Բ. Պիոտրովսկին։ Մասնակցել են պատմ. գիտ. թեկնածուներ բակ. բնկ. Արմ. Միրզոյանը, Վ. Աբրահամյանը և Հ. Եղիազարյանը։ Պեղման արդյունքների մասին զեկուցել է Բ. Բ. Պիոտրովսկին։

Միջնադարում և ավելի ուշ շրջանում դրվագումը կատարվում էր մի քանի տեսակ՝ մանր օրնամենտների դրվագում, հարթ դրվագում և ուռուցիկ (ռելիեֆ) դրվագում։

Ինչպես ասացինք, նախքան դրվագելը ոսկերիչը կռելու միջոցով պատրաստում էր իրը, որից հետո ձեռնարկում էր արտաքին ձևավորման, սակայն պատահում էր նաև, որ ոսկերիչը նախ մետաղյա թերթիկի վրա դրվագում էր քանդակը և ապա կռելու միջոցով պատրաստում ցանկացած իրը։ Պետք է ասել, որ այս վերջին միջոցը քիչ էր կիրառվում ոսկերչության մեջ, որովհետև դրվագումից հետո, կռելու ժամանակ քանդակները կարող էին վնասվել։ Դրվագման միջոցով սովորաբար ոսկերիչը կարող էր պատրաստել այնպիսի իր, որի վրա կիրառված լինեն միայն հարթ կամ մանր քանդակներ։ Բայց հանդիպում ենք նաև այնպիսի իրերի, որոնց վրա դրվագված են ոչ միայն պարզ օրնամենտներ, այլև ուռուցիկ զարդանկարներ։ Մանր տեսակի օրնամենտներ կիրառվում էին մեծ մասամբ եղրանախշերի ժամանակ։ Մանր օրնամենտների համար կային հատուկ գործիքներ՝ նման ձողերի, այդ գործիքների ծայրերին պատրաստված էին զանազան տեսակի օրնամենտների մոդելները, փոքրիկ զարդանախշերով՝ կլոր շրջանակներ, փոս ընկած, ուռուցիկ, որոնք դասավորված էին երբեմն եռանկյունի կամ քառանկյունի ձևով։ Երբ ոսկերիչը ցանկանում էր բաժակի կամ թասի շուրջը զարդարել մանր օրնամենտներով, նախքան իրը պատրաստելը, արծաթյա կամ ոսկյա թերթիկի վրա մուրճի հարվածներով դրոշմում էր պողպատյա ձողիկների վրա եղած օրնամենտները։

Եթե ոսկերիչը ցանկանում էր որևէ իրի վրա դրվագել ուռուցիկ երկրաչափական, բուսական կամ կենդանական օրնամենտներ, այդ դեպքում գնդասեղի ծայրերով ամբողջ քանդակը պատկերում էր մետաղյա իրի վրա, երբեմն էլ ոսկերչական հատուկ գրչի ծայրով գծում ցանկացած քանդակը, ապա ոսկերիչը փոքրիկ մուրճի հարվածներով ծեծում էր իրը, մինչև որ գծված քանդակը ամբողջությամբ փոխանցվեր նրա վրա։ Քանդակի դրվագումը վերջացնելուց հետո վարպետն ուղիղ երեսից խորացնում և ավելի ռելիեֆ էր դարձնում այն։ Սակայն կային օրնամենտներ, որոնց համար պահանջվում էր կրկնակի դրվագում, այսինքն, իրի թե՛ ներսից և թե՛ դրսից։ Այդ դեպքում վարպետն օրնամենտների մի մասը ներսի կողմից մուրճով հարվածում և ստանում էր ռելիեֆ օրնամենտներ, իսկ այն մասը, որտեղ քանդակը ներս ընկած պետք է լիներ, մուրճի հարվածները տրվում էին դրսի կողմից։ Երկու դեպքում էլ թե՛ ներսի և թե՛ դրսի կողմից իրը ծածկվում էր սև ձութով՝ մուրճի հարվածներից մետաղը պաշտպանելու համար։

Հայաստանում թե՛ քարարկղե դամբարաններից և թե՛ ուրարտական շրջանին պատկանող վայրերից հայտնաբերվել են մի շարք իրեր՝ ոսկուց, արծաթից, բրոնզից, որոնք պատրաստված են դրվագման եղանակով։ Այդ իրերից մեկը, ինչպես ասացինք, Կիրովականի դամբարանից հայտնաբերված ոսկյա թասն է՝ առյուծի քանդակներով։ 1932 թվականին Լալայանի պեղումների ժամանակ Նոր-Բայազետի շրջանի դամբարաններից մեկում գտնվել է բրոնզյա մի թաս, որի վրա դրսի կողմից դրվագման տեխնիկայով պատկերված է ճառագայթաձև մի նախշ՝ նման արևի, իսկ 1929 թվականին Գոլովինոյի դամբարանների պեղումներից հայտնաբերվել է բրոնզյա թասակ, բայց ավելի մեծ չափի, խոր և թագի նման։ Այս կանացի գլխի թասակի վրա ավելի



Նկ. 3
Դրվագման գործիքների մի քանի նմուշներ ըստ Բ. Ա. Ռիբակովի (բացի մուրճերից)։

ռելեֆ ձևով են դրվագած ակոսանման զարդեր։ Վերոհիշյալ թասը և կանացի գլխի թասակը պատկանում են առաջին հազարամյակի առաջին կեսին (մ. թ. ա.)։

Մետաղամշակումը և դրա հետ կապված ոսկերչությունը հայկական բարձրավանդակում ավելի զարգացավ և կատարելագործվեց ուրարտական շրջանում։ Ուրարտական շրջանի նյութական մնացորդները հաստատում են, որ դրվագման տեխնիկան ամենից շատ տարածված ճյուղերից է եղել։ Այդ շրջանում ոսկերիչ վարպետներն իրենց նուրբ գործիքներով աշխատել են ոչ միայն

Նկ. 4
Ոսկյա գավաթ Կիրովականից։

ոսկու և արծաթի, այլև բրոնզի վրա։ Այն իրերը, որոնք հայտնաբերվել են Թոփրակ-Կալեի և Կարմիր բլուրի պեղումների ժամանակ, հաստատում են, որ Ուրարտական շրջանում ոսկերիչները դրվագման տեխնիկան կիրառել են բուսական, երկրաչափական և կենդանական քանդակներ անելու համար, իսկ ռազմական իրերի վրա մենք տեսնում ենք ռազմական բնույթի քանդակներ. Այնտեղ կենաց ծառի կողքին դրվագում էին ռազմակառքեր, հեծյալներ և անգամ վիշապների պատկերներ։ Դրվագման լավագույն օրինակներ կարող են ծառայել Կարմիր բլուրում գտնված սաղավարտի և կապարճի վրա եղած ռազմակառքերի և ռազմիկների ռելեֆ քանդակները։ Լավագույն ձևով դրվագած է կապարճներից մեկը, որը հայտնաբերվել է 1950 թվականին և մի վահան, որը հայտնաբերվել է 1951 թվականին պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ Կարմիր բլուրում կատարված պեղումների ժամանակ։ Վահանի վրայի ցուլերի ու առյուծների քանդակները համեմատած սաղավարտի հետ՝ ավելի ուռուցիկ են և որոշակի. այս վահանն իր արվեստով և քանդակներով նման է Թոփրակ-Կալեյում գտնված վահանին։

Ուրարտական շրջանից հետո մեր ձեռքի տակ չունենք միջնադարին վերաբերող նյութական մնացորդներ, որպեսզի կարողանանք գաղափար կազմել այդ շրջանի ոսկերչական արվեստի մասին և պարզել Հայաստանի կապը հարևան երկրների հետ ու նրանց փոխազդեցությունը։ Այդ տեսակետից Հայաստանն առայժմ ավելի աղքատ նյութ ունի, քան նրա հարևան երկրներից Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան։

Դրվագման տեխնիկայով պատրաստված իրերի լավագույն նմուշներով հարուստ է նաև Վրաստանը։ Այդ բանը հաստատվեց Ն. սև պրոֆ. Կուֆտինի պեղումներով, որտեղից հայտնաբերված է դրվագման եղանակով պատրաստված ոսկյա բաժակ՝ նման Կիրովականում գտնվածին և դույլանման անոթներ՝ ար-

ծաթից, դարձյալ դրվագած։ Այդ իրերը գտնվել են Կուրգանից և պատկանում են երկրորդ հազարամյակի կեսին (Ն. ք. մ. թ.)[1]։

Դրվագման լավ օրինակներ հայտնաբերվել են նաև Արմազիի պեղումներից, որոնք մեզ գաղափար են տալիս հելլենիստական շրջանի ոսկերչական արվեստի մասին։ Պետք է նշել, որ դրվագման տեխնիկայով պատրաստված իրերի լավագույն նմուշներ են գտնվել նաև Ռուսաստանում (9—15-րդ դարերին վերաբերող)[2]։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի անմիջական հարևան և նրա հետ կապ ունեցող երկրներում, ոսկերչական արհեստում դրրվագման տեխնիկան զարգացած և ամենից շատ տարածված ճյուղերից մեկն է եղել։

Չնայած այն բանին, որ մենք միջնադարյան Հայաստանում դրվագման լավագույն օրինակներ դեռևս չունենք, սակայն մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները՝ թագավորների և իշխանների, հարուստ խնճույքների մասին, որտեղ գործածվում էին ոսկյա պնակներ և բաժակներ, մեզ ենթադրել են տալիս, որ այդ իրերն անշուշտ ունեցել են իրենց վրա զանազան տեսակի քանդակներ։

Հայաստանի Պետական Պատմական թանգարանը և Ձեռագրատունը հարուստ են 17—19-րդ դարերին պատկանող ոսկերչական լավագույն նմուշներով, որոնցից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում ևս այդ արհեստը բավականաչափ զարգացած է եղել։ Մենք համոզված ենք, որ նոր պեղումները կգան հաստատելու մեր այդ ենթադրությունը։ Հայաստանի ոսկերիչների դրվագման լավագույն նմուշներն են հանդիսանում Մատենադարանում գտնվող ձեռագրերի արծաթյա և ոսկյա կազմերը, որոնց որոշ մասը պատրաստված է դրվագման տեխնիկայով։

Մատենադարանի 15-րդ դարին պատկանող № 6792 ձեռագրի կազմը արծաթից է և պատկանում է ավելի ուշ շրջանին։ Նա պատրաստված է դրվագման եղանակով։ Դրվագման լավ օրինակներից է նաև № 5580 ձեռագիրը, գրված 1622 թվականին՝ Բաղեշում. նրա արծաթյա կազմի վրա կատարված է թե՛ դրվագման և թե՛ փորագրական աշխատանք։ Ձեռագրի կազմը պատրաստված է 1730 թվականին, սակայն կաշվե կազմի վրա եղած հետքերից երևում է, որ մինչև այդ նոր արծաթյա կազմը, ձեռագիրն ունեցել է արծաթյա հին կազմ, որը հետագայում կողոպտվել է կամ ոչնչացվել, այդ հաստատվում է կազմի ներսի կողմում մնացած արծաթյա մեխիկների մնացորդներով։

Դրվագման լավագույն նմուշներից է № 9273 ձեռագիրը, որի հիշատակարանից երևում է, որ այդ ավետարանը գրվել է 1494 թվականին, Գրիգոր արեղայի ձեռքով։ Կազմի առաջին երեսի վրա ոսկերիչ վարպետը շատ ռելեֆ ձևով դրվագել է Քրիստոսի պատկերը հիվանդներին բժշկելիս։ Ավետարանի կազմի չորս կողմերին դրվագած են բուսական քանդակներ, որոնց մեջ վեց թևանի թերթիկներով ծաղիկը շատ տարածված մոտիվ էր այդ դարերին։ Կան ձեռագրերի կազմեր, որոնք պատրաստված են կրկնակի դրվագման եղանակով, այդպիսին է № 5653 ձեռագրի արծաթյա կազմը։ Այս ձեռագրի կազմի երկու երեսներին դրվագած են նույն օրնամենտները։ Կենտրոնում սրտաձև

[1] Куфтин, Археологические раскопки в Триалети, 1941. Тбилиси, стр. 62.
[2] Б. А. Рыбаков, Ремесло древней Руси, 1948, стр. 291.

զարդ, մեջտեղում կիսալուսին, վրան՝ փոքրիկ խաչ։ Կազմի վրա եղած փորագրությունից պարզվում է, որ այդ ձեռագիրն արծաթապատված է 1781 թվականին՝ վանեցի Պետրոս վարդապետի պահանջով։ Այս արվեստով պատրաստված ձեռագրերի բազմաթիվ նմուշներ պահպանվում են Մատենադարանում։

Թվարկված օրինակները բավական են եզրակացնելու, որ միջնադարյան Հայաստանում նույնպես տարածված պետք է լիներ դրվագման տեխնիկան՝ մանավանդ ձեռագրերի մետաղազարդ կազմի և եկեղեցական պիտույքների պատրաստման գործում։

15-րդ դարից հետո կրկնակի դրվագման տեխնիկայի լավագույն օրինակներ մենք տեսնում ենք կանացի գլխի թասակների վրա, այդ թասակները պատրաստվում էին մեծ մասամբ արծաթից կամ վարշաղից, շատ հայվադյուտ դեպքում ոսկեզօծում էին։ Հայ ոսկերիչները այդ թասակները զարդարում էին բուսական քանդակներով կամ կրոնական բնույթի պարդերով։



Նկ. 5
Արծաթյա թասակ կանանց գլխի։

Այդ տեսակետից հետաքրքիր մի նմուշ է 18-րդ դարում Արևմտյան Հայաստանում պատրաստված թասակը՝ քանդակված կրկնակի դրվագման եղանակով։ Նման գլխի թասակներ մինչև 20-րդ դարի սկզբները հայ գեղջկուհիները կրել են իրենց գլխներին, որպես զարդարանք։

Բացի թասակներից՝ Հայաստանի ոսկերիչները կրկնակի դրվագման եղանակով պատրաստում էին զանազան տեսակի տուփեր, անոթներ, ափսեներ, բաժակներ, ձեռքի հայելիների պահպանակներ, որոնց վրա փորագրում և դրվագում էին ոչ միայն բուսական և երկրաչափական օրնամենտներ, այլև քանդակում էին խնճույքի, որսի տեսարաններ, պատմական ու առասպելական թեմաներ։

Մեր ձեռքի տակ եղած նյութական մնացորդներից երևում է, որ միջնադարյան Հայաստանում ոսկերչության մեջ ամենից շատ տարածված են եղել բուսական քանդակները՝ հատկապես վեց թևանի և ութ թևանի ծաղիկները, խաղողի ողկույզը, նռան ու նուշի հատիկները և այլն։

Դրոշմելու (շտամպի) տեխնիկան.—Ոսկերչության մեջ, դրվագումից բացի շատ տարածված էր նաև դրոշմելու տեխնիկան։ Այդ տեխնիկան իր արվեստով նման է դրվագման տեխնիկային, որ հետագա դարերում ավելի լայն ձևով կիրառվել է և փոխարինել նրան։ Եթե դրվագման եղանակով որևիցե իր կամ զարդ պատրաստելու համար պահանջվում է երկարատև աշխատանք, յուրաքանչյուր օրինակի համար առանձին գծագրություն և ապա մուրճի բազմաթիվ հարվածներից հետո միայն նկարված քանդակն արտահայտվում էր արծաթյա կամ ոսկյա թերթիկի վրա, ապա դրոշմելու տեխնիկան այդ դժվարությունը չուներ։ Միատեսակ օրնամենտ ունեցող մեծաքանակ իրեր պատրաստելու համար անհրաժեշտ էր միայն մի մոդել, որից յուրաքանչյուր անգամ մուրճի մեկ հարվածով ստացվում էր մեկ օրինակ։ Այս ձևով աշխատելն ավելի արդյունավետ էր դառնում, որովհետև կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ զարդեր ու դրամներ կարելի էր պատրաստել։ Դրոշմելու տեխնիկայի ժամանակ, սակայն, պահանջվում էին ավելի նուրբ մետաղյա թերթիկներ, որպեսզի մեկ հարվածից հետո քանդակի ռելեֆությունն ուժեղ ձևով արտահայտվեր։

Բոլոր տեսակի դրամները թե՛ հնում և թե՛ միջնադարում, պատրաստում էին դրոշմելու եղանակով։ Հայաստանը նույնպես կտրել է իր սեփական դրամը՝ դեռևս Արտաշեսյան դինաստիայի ժամանակ (Տիգրանի և Արտավազդի դրամները)։ Այդ ցույց է տալիս, որ Հայաստանի ոսկերիչներն առաջին դարում (Նախքան մ. թ.) ծանոթ են եղել դրոշմելու տեխնիկային և կիրառել են այն ոչ միայն դրամներ կռելու համար, այլև կանանց նուրբ զարդեր պատրաստելու ժամանակ։

Դրամ պատրաստելու համար անհրաժեշտ էր ունենալ դրամի երկու երեսների համար առանձին մոդելներ։ Դրամի մեկ երեսի զարդի մոդելը փորագրում էին կապարից պատրաստված առանձին ձողի մակերեսին, որի վրա դրվում էր դրամի համար նախատեսված ոսկյա կամ արծաթյա թերթիկը, իսկ դրամի մյուս երեսի մոդելը փոխագրվում էր հարվածող ձողի վրա։ Այդ նախապատրաստական պրոցեսից հետո, մեկ հարվածով արծաթյա կամ ոսկյա թերթիկի վրա պատկերվում էին երկու երեսների վրա եղած զարդանախշերը։ Բացի դրանից՝ դրոշմելու տեխնիկայով պատրաստում էին նաև մեդալիոններ, կանացի կրծքի նուրբ զարդարանքներ, ապարանջաններ, ականջօղեր։

Դրոշմելու եղանակով պատրաստված ոսկյա և արծաթյա զարդերի մեջ ամենահնադույնները, որ մեր ձեռքն են հասել պեղումներից, Օձունի դամբարանից հայտնաբերված արծաթյա թերթիկը և ոսկյա մեդալիոնն են, որոնք պատրաստված են հատուկ մոդելի միջոցով։

Դրոշմելու տեխնիկայով է պատրաստված Թուիրակ-Կալեից հայտնաբերված ոսկյա մեդալիոնը՝ կանացի պատկերաքանդակով։ Բացի դրանից հելլենիստական շրջանի մեդալիոններ հայտնաբերվել են Նոր Բայազետի Փաշաքյանդ գյուղից և Արմավիրի ավերակներից։

Դվինի պեղումներից հայտնաբերված ոսկյա զարդարանքները ցույց են տալիս, որ դրոշմելու տեխնիկան կիրառվել է ոսկերչության մեջ ոչ միայն հնագույն և հելլենիստական շրջանում, այլև՝ միջնադարում։ Դրոշմելու տեխնիկայով է պատրաստված 1950 թ. Դվինի պեղումների ժամանակ միջնաբերդից հայտնաբերված կրծքի ոսկյա նուրբ զարդը, որի վրա կան ութ թևանի վարդանման զարդանախշեր։ Ավելի նուրբ աշխատանքի նմուշ է պեղումների ժամանակ գտնված մի ուրիշ ոսկե զարդարանքի մասը, որի վրա շատ պարզ երևում է սրտաձև ուռուցիկ մի քանդակ՝ կատարված դրոշմելու միջոցով։

17—19-րդ դդ. պատկանող ոսկյա և արծաթյա զարդերի վրա նույնպես նկատելի է դրոշմելու տեխնիկան։ Այդպիսի զարդերի լավագույն օրինակներ գտնվում են Պետ. Պատմական թանգարանում։

Հատիկի և թելի հյուսվածքի տեխնիկան.— Ոսկերչության կարևոր ճյուղերից է հատիկավոր և թելի (филигран) տեխնիկան, որը նույնպես հնագույն է համարվում։ Հատիկավոր տեխնիկայի աշխատանքը սերտորեն կապված է ոսկյա և արծաթյա թելերի հյուսվածքի տեխնիկայի հետ և նրա հնագույն լինելը հաստատվում է Հայաստանի պեղումներից հայտնաբերված ոսկյա և արծաթյա զարդերով։ Դրանցից անհամեմատ ավելի շատ նմուշներ ունենք գտնված թե՛ դամբարաններից և թե՛ միջնադարյան առևտրա-արհեստավորական կենտրոն Դվին քաղաքի պեղումներից, որը եղել է ոսկերչության հնագույն օջախներից մեկը։ Թելի և հատիկավոր աշխատանքի համար պահանջվող գործիքներն անհամեմատ ավելի քիչ են։ Ամենակարևոր գործիքը պողպատյա սալիկն է՝ անցքերով (թելքաշ, հադիդա) 1 մմ-ից մինչև 6 մմ. այդ անցքերի միջոցով ամենահաստ ոսկյա կամ արծաթյա լարից կարելի է հյուսվածքի համար ստանալ ամենաբարակ թել։ Մյուս կարևոր գործիքը երկբերան ունելին է, որի մի բերանն ավելի լայն է, որպեսզի հեշտությամբ հնարավոր լինի հատիկները շարել և թելից հյուսել ցանկացած օրնամենտը։ Մյուս գործիքներից են սալը, զանազան չափսի բրիչներ, հալոցքի անոթը, թել ոլորող սալը, այրող ծրագը և այլն։

Նախքան իրը պատրաստելը ոսկերիչը պետք է պատրաստեր զանազան չափի հատիկներ և հյուսվածքի համար բարակ թելեր՝ ոսկուց կամ արծաթից։ Միջնադարում այդ աշխատանքը կատարվում էր ավելի պրիմիտիվ ձևով։ Դրա համար ոսկերիչը մաքուր ոսկուց կամ արծաթից պատրաստում էր երկար լարեր՝ թելքաշի օգնությամբ։ Այնուհետև այդ լարերից կտրատում էր տարբեր չափի մասեր և ապա շարում հատուկ անոթի մեջ՝ ածխի փոշու վրա, և այսպես շերտ առ շերտ դասավորելուց հետո անոթի բերանը ծածկում և թաղում էր կրակի մեջ՝ մինչև մետաղի հալվելը և կլոր գնդիկների վերածվելը։ Այնուհետև պատրաստի գնդիկները լցնում էր ջրով լիքը կոնքի մեջ՝ սառեցնելու համար, հետո արծաթյա կամ ոսկյա հատիկները լվանում էր, չորացնում և պահում հատուկ տուփերի մեջ՝ օգտագործելու համար։ Ինչպես հատիկները, այնպես էլ բարակ թելերը պատրաստվում էին դժվարությամբ։ Նախ և առաջ մետաղյա ձողն անց էին կացնում պողպատյա սալիկի տարբեր չափսի անց-

քերով. մինչև ամենարարակ թել ստանալը, որից հետո փաթաթում էին հաստուկ կոճերի վրա։

Ոսկու կամ արծաթի թելերով ու հատիկներով էին զարդարում միջնադարյան ոսկյա կամ արծաթյա բաժակները, բաժակակալները, հարսանեկան զանազան տեսակի տուփեր, կանացի զարդարանքներ, գոտիներ, ապարանջաններ, ականջի օղեր, կրծքի քորոցներ և այլն։



Նկ. 6
Հատիկի և թելի հյուսվածքի ոսկերչական գործիքներ։
Նկար Ա. Պատրիկի

Ոսկերիչ վարպետը եթե ցանկանում էր բաժակը զարդարել հյուսածո արվեստով, նախօրոք պատրաստում էր իրի կմախքը կռելու եղանակով և ապա ոսկու թելերով ու հատիկներով հյուսում բուսական քանդակներ։

Հատիկավոր գործի հնագույն նմուշներ գտնվել են Կիրովականի թագավորանիստ և Դիմացի-թաղ կոչվող դամբարաններում և Մարտունու շրջանի Ագիյաման գյուղում հայտնաբերված դամբարաններից մեկում։ Ագիյամանի դամբարանում գտնված զարդը կազմված է երկու կտորից, հավանաբար ականջողի երկու կտորներ են, որոնց վրա վարպետը հատիկներով կազմել է եռանկյուններ, մի բան, որ շատ տարածված էր Հայաստանում։ 1952 թ. Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի շրջակայքի շինարարական աշխատանքների ժամանակ բացվեց մի մեծ և հարուստ դամբարան, որտեղ բրոնզյա հարուստ իրերի հետ հայտնաբերվեցին նաև ոսկյա մանյակի մասեր, որոնք պատրաստված են թե-

,ի և հատիկավոր տեխնիկայի ամենանուրբ արվեստով*։ Նույն արվեստով մի զույգ ոսկյա ականջօղեր գտնվել են Կարմիր բլուրի պեղումների ժամանակ**։ Այդ կիսալուսնաձև ականջօղի վրա պատրաստված են երկշարք եռանկյունիներ՝ ոսկյա վերադիր հատիկներով։

Հայաստանում թելի հյուսվածքի և հատիկի տեխնիկան տարածված և զարգացած է եղել ոչ միայն հնագույն շրջանում, այլև միջնադարում, դա հաստատվում է Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված ոսկյա զարդերով***, որոնք թելի և հատիկավոր աշխատանքի ամենանուրբ նմուշներ են։ Դվինում գտնված ոսկյա զարդերից անհրաժեշտ է նշել օձագլուխ ապարանջանը, որի վրա եռանկյունի ձևերով դասավորված են հատիկները՝ նման Ադիյամանի և Կարմիր բլուրի ականջօղերին։ Ամբողջովին թելի հյուսվածքով է պատրաստված նույն վայրում գտնված մի ականջօղ, որը զարդարված է եղել նաև թանկարժեք քարերով։

Հատիկավոր տեխնիկայի տեղական լինելը հաստատվում է նաև նրանով, որ վերջին տարիների պեղումների ընթացքում նույն արվեստով պատրաստված ոսկյա զարդեր գտնվել են նաև առաջին հազարամյակին պատկանող քարարկղեղ գամբարաններից (Կիրովական), որոնք զարդարված են նույնպես եռանկյունաձև, երկշարք վերադիր հատիկներով։ Եռանկյունաձև հատիկավոր նախշերը կիրառվել են ոչ միայն ոսկյա և բրոնզյա իրերի վրա, այլև կերամիկայի վրա, մանավանդ ուրարտական շրջանում։ Դրանց տեղական լինելը ոչ մի կասկած չի կարող հարուցել։ Այդ եռանկյունաձև հատիկավոր զարդանախշերը հետագայում կիրառվել են նաև միջնադարում, ինչպես հաստատում են Դվինում գտնված ապարանջանների վրա եղած հատիկավոր զարդանախշերը։



Նկ. 7
Ապարանջան ոսկուց։ Դվինի պեղումներից։

Թելի և հատիկավոր տեխնիկայով պատրաստված մեծ թվով արծաթյա զարդեր ունենք, որոնք պատկանում են 17—19-րդ դարերին։ Հյուսվածքի արվեստը ոսկերչության մեջ շատ տարածված էր Էրզրումում, Տրապիզոնում, իսկ հետագա դարերում՝ Ախալցխայում։

* Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի գամբարանի նյութերը ձեռք են բերված Քանդարանի հնագիտական բաժնի վարիչ ընկ. Հ. Մնացականյանի միջոցով։

** Կարմիր բլուրի պեղումները ղեկավարում է պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին։

*** Դվինի պեղումները ղեկավարում է պատմ. գիտ. թեկնածու ընկ. Կ. Ղաֆադարյանը։



Նկ. 8

1. Արծաթյա գոտի Էրզրումից։
2. Արծաթյա գոտի Ախալցխայից։

Հայաստանում, առհասարակ, իշխող դասին պատկանող կանայք գործածել են այնպիսի գոտիներ, որոնց առաջին մասը (ճարմանդը) պատրաստված էր նուրբ արվեստով՝ արծաթից կամ ոսկուց, զարդարված գույնզգույն քարերով։ Ճարմանդներ կրել են նաև հոգևորականները՝ եկեղեցական ծիսակատարության ժամանակ, միայն այն տարբերությամբ, որ նրանց ճարմանդներն իրենց ծավալով ավելի մեծ էին։ Ոսկերչական լավ աշխատանք է Պետական Պատմական թանգարանի № 1295 գոտու արծաթյա ոսկեջրած ճարմանդը, որն ունի երեք գորտանման հավելվածներ։ Այդ ճարմանդի արծաթյա թերթիկը ծածկված է ոսկեթել հյուսվածքով՝ պատրաստված բուսական զարդանախշերով, որոնց կենտրոնում փայլում է մուգ կարմիր գույնի ագատը։ Պետական Պատմական թանգարանում գտնվող մի այլ ճարմանդ (№ 637), նույնպես արծաթյա, ոսկեջրած, ամբողջովին զարդարված է վերադիր նշաձև նախշերով և ծածկված է թանկարժեք գույնզգույն քարերով։



Նկ. 9
Արծաթյա ճարմանդ։

Թելի հյուսվածքի և հատիկի տեխնիկան կիրառվել է նաև ձեռագրերի արծաթյա կամ ոսկյա կազմեր ու տուփեր պատրաստելու ժամանակ։ Մատենադարանում այդպիսի օրինակներ շատ կան։ Հաճախ ձեռագրի կազմը ամբողջովին պատրաստվում է հյուսվածքի աշխատանքով, իսկ երբեմն այդ թել-հատիկավոր աշխատանքը խառը ձևով հանդես է գալիս դրվագման և փորագրական տեխնիկայի հետ միասին։ Մաքուր թելի և հատիկի տեխնիկայով պատրաստված աշխատանքներից անհրաժեշտ ենք համարում հիշատակել երկու օրինակ։ Դրանցից մեկը № 6785 ձեռագիր ավետարանի արծաթյա կազմն է, պատրաստված 1713 թվականին։ Նրա վրա թելի աշխատանքով հյուսված են բուսական օրնամենտներ, ավետարանի չորս անկյուններում ամրացված են վերադիր ութ թևանի էմալապատ վարդեր, որոնք կազմին տալիս են գեղեցկություն։ Թելի մաքուր աշխատանք է նաև № 6788 ձեռագրի արծաթակազմը, որը պատրաստված է 1782 թվականին Էրզրում քաղաքում։ Կազմի ամբողջ դաշտը ծածկված է խաղողի, նռան քանդակներով։ Նյութական մնացորդները հաստատում են, որ միջնադարում Հայաստանի ոսկերիչներն առանձնապես թելի աշխատանքում կիրառել են բուսական քանդակներ, որոնց մեջ գերիշխում էին 8 և 6 թևանի վարդերը, խաղողի ողկույզը և նռան պատկերները։

Սևադապատման, արծնակիտման, ոսկեզօծման և ինկրուստացիայի տեխնիկան.— Հայաստանի ոսկերչության մեջ թե՛ զարդերի և թե՛ իրերի արտաքին ձևավորման համար օգտագործել են սևադապատման, արծնակիտման և ինկրուստացիայի տեխնիկան։ Սևադապատումը մեծ մասամբ կատարում էին արծաթյա իրերի, բաժակների, ափսեների, տուփերի, սափորների և երբեմն էլ կանացի լայն ապարանջանների և գոտիների վրա։ Սևադապատման տեխնիկայի հնագույն լինելը հաստատվել է Թուիբակ-Կալեի պեղումներից հայտնաբերված սևադի փոշիի մնացորդով։ Մեր ձեռքի տակ բավարար չափով

նյութ չլինելու պատճառով, չենք կարող ասել, թե այդ տեխնիկան որ դարում ավելի գործածական էր, միայն 18-րդ դարից սկսած մեր ձեռքի տակ ունենք մեծ քանակությամբ սևադապատած արծաթյա իրեր և զարդեր, որոնք պատրաստվել են թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանի ոսկերիչների ձեռքով։ Դրանք մեզ համոզում են, որ 18—19-րդ դարերում սևադապատման տեխնիկան շատ զարգացած և հարգված ճյուղ էր ոսկերչության մեջ։

Սևադապատումը երկարատև և կրկնակի աշխատանք է պահանջում։ Որևիցե իր սևադելու համար անհրաժեշտ էր լավ փորագրական աշխատանք. որքան նուրբ էր կատարվում փորագրությունը, այնքան հաջող էր լինում սևադապատումը։ Իրը կամ զարդը սևադապատելու համար ոսկերիչը նախ և առաջ դրսի կողմից ոսկերչական նուրբ գրիչով խորը փորագրում էր ցանկացած օրնամենտը՝ բուսական քանդակներ, դիմանկարներ կամ պատմական հուշարձաններ. փորագրության ժամանակ վարպետն ավելի խորացնում էր այն մասերը, որոնք պետք է սևադով ծածկվեն, այնուհետև փորագրած մասերի վրա վրձինով քսում էր հատուկ հեղուկ, որից հետո խողովականման գործիքով ամբողջ կտրվածքի վրա հավասար չափով ցանում էր սևադի փոշին. երբ իրն ամբողջովին ծածկվում էր սևադով, այն դրվում էր հնոցի մեջ և պահվում էր այնքան, մինչև սևադի փոշին հալվում և լցվում էր փորագրած մասերն ամբողջությամբ։ Դրանից հետո ոսկերիչը հատուկ գործիքով (քերիչ) մաքրում էր իրի մակերեսից ամբողջ սև լաքը, մնում էր միայն փորագրած մասի սևադը, որն արդեն հավասարված էր լինում ընդհանուր մակերեսին։

Սևադապատած իրերից և զարդերից մենք ունենք քիչ նմուշներ, բայց դա չի նշանակում, որ այդ տեխնիկան միջնադարյան Հայաստանում տարածված չէր։ Սևադապատած իրերի կամ զարդերի սակավ լինելը պետք է բացատրել նրանով, որ մենք դեռևս միջնադարյան վայրերից քիչ տեղեր ենք պեղել, բացի այդ՝ պեղումների ընթացքում չեն գտնվել արծաթյա իրեր։

Հայաստանում ամենահնագույն շրջանի սևադապատած զարդը, որ մեր ձեռքն է հասել, 1949 թ. Դվինի միջնաբերդի պեղումներից գտնված ոսկյա մատանին է, փիրուզյա ակով։ Այդ մատանու երկու կողքերի զարդերը պատրաստված են սևադի տեխնիկայով։

Սևադապատման տեխնիկան կիրառվել է նաև ձեռագրերի արծաթյա կազմերը զարդարելու ժամանակ։ Միջնադարյան ձեռագրերի արծաթյա կազմերից անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշել № 5651 ձեռագիր ավետարանը, որը գրված է 1333 թ. մոնղոլների ժամանակ, Վայոց ձորի մենաստան Նորավանքում։ Այս ավետարանի ներկա կազմը պատրաստված է ավելի ուշ՝ 17-րդ դարում։ Ոսկերիչ վարպետը կազմի վրա կիրառել է մի քանի տեխնիկա, կազմի ամբողջ դաշտը փորագրված է և ապա սևադապատված։ Այն զարդարված է վերադիր ձուլածո զարդանախշերով և գույնզգույն ակներով։ Հետաքրքիր աշխատանք է № 7775 ձեռագիր ավետարանի արծաթյա կազմը։ Նրա առաջին և երկրորդ երեսները պատրաստված են դրվագման տեխնիկայով, և պատկերված են խաղողի տերևների նման բուսաքանդակներ, շատ նման Տեկորի քանդակներին։ Կազմի փակելու մասը սևադապատված փորագրություն է, որից պարզվում է, որ այն պատրաստված է վանեցի ոսկերչի կողմից։ Սևադապատման տեխնիկան ամենից շատ տարածված և զարգացած է եղել 18—19-րդ դարերում՝ Արևմտյան Հայաստանում, հատկապես Վանում։ Պետ. Պատմական թանգարանում կենտրոնացած են այդ դարերին վերաբերող մեծ քանակու-

Թյամբ արծաթյա իրեր ու զարդեր, որոնց վրա սևադի տեխնիկայով փորագրված են ոչ միայն բուսական քանդակներ, այլև պատմական հուշարձաններ, տեսարաններ և թագավորների, զորավարների ու պատմագիրների դիմանկարներ։

Նկ. 10
Արծաթյա սափոր, սևադապատած։

Թանգարանում կան գոտիներ 18—19-րդ դարերից. դրանցից են N 2514 և 2329 արծաթյա գոտիները, կազմված 12—16 քառակող արծաթյա տախտակներից, վրան փորագրած բուսական քանդակներ և ծածկված սևադով։

Ոսկյա և արծաթյա զարդերին ու իրերին արտաքին գեղարվեստական ձևավորում տալու համար նաև արծնակիտում (էմալապատում) էին։ Արծնակիտման տեխնիկան Հայաստանում հանդես է եկել ավելի ուշ և զարգացել է հատկապես 17-րդ դարից հետո։ Գոնե առայժմ Հայաստանում ավելի հին և վաղ միջնադարից չունենք արծնակիտման նմուշներ, սակայն Հայաստանի անմիջական հարևան Վրաստանում՝ Արմազիի պեղումների ժամանակ դամբարաններից հայտնաբերվել են արծնակիտած իրեր, որոնք պատկանում են 4—3-րդ դարերին (մ. թ. ա.)։

Արծնակիտման և մասնավորապես միջպատային էմալի տեխնիկան զարգացած և շատ տարածված էր Ռուսաստանում։ Ամենայն հավանականությամբ վերջին դարերում այդ տեխնիկան մուտք է գործել Կովկաս և Հայաստան։

Արծնակիտման համար նախ վարպետն իրի արտաքին մասը հատուկ գործիքով քերում է, առաջացնելով անհարթություններ և գծիկներ. որից հետո էմալապատում է։ Իսկ երբ չի ցանկանում իրի ամբողջ դաշտը ծածկել էմալով, այդ դեպքում առանձին շրջանակների մեջ՝ զանազան գույնի էմալներով պատրաստում է ցանկացած նկարը և ապա այդ շրջանակները ամրացնում իրի վրա։

Միջնադարում, բացի զարդերից ու իրերից, արծնակիտում էին նաև ձեռագրերի արծաթյա կազմերը։ Այդպիսի տեխնիկայի նմուշ է № 7789 ձեռագրի արծաթյա կազմը, որի առաջին երեսը պատրաստված է դրվագման եղանակով և պատկերում է արևը, իսկ չորս անկյուններում վերադիր կապույտ ֆոնի վրա կան չորս առաքյալների դիմանկարներ։ № 6767 ձեռագիր ավետարանի արծաթյա կազմի վրա նույնպես կիրառված է արծնակիտման տեխնիկան. այս ավետարանը գրվել է 1471 թ. Առեստ գյուղում և ավարտվել է Խառաբաստա վանքում։

18—19-րդ դարերում արծնակիտման տեխնիկան բավականաչափ զարգացած է եղել Ղարաբաղի Շուշի քաղաքում։

Արծնակիտման լավագույն նմուշներից պետք է համարել Շուշեցի ոսկերիչ ուստա Բաղամի ձեռքով 19-րդ դարի վերջերին պատրաստված մի կոմպլեկտ, բաղկացած հետևյալ իրերից. մի ափսե՝ մեծ բաժակով, գինու փոքր բաժակներ, ծխախոտի տուփ, դաշույն, սափոր և գոտի։ Այդ իրերի արծաթյա շենքը ծածկված է ամբողջովին մուգ կապույտ էմալով, նա ոսկեզոծված է աստղաձև և զարդարված է բուսական նախշերով, որոնց ծաղիկների տերևները ոսկեզոծ են, իսկ ծաղիկների թերթիկները լցրած են կարմիր, սպիտակ և կապույտ էմալներով, արտաքուստ նման փոքր ուլունքների։

Նկ. 11
Արծաթյա բաժակներ և տուփ, պատրաստված արծնակիտման (էմալի) տեխնիկայով։

18—19-րդ դարերում շատ տարածված էր դաշույնների դաստակների էմալապատման տեխնիկան։ Այդպիսի տեխնիկայով պատրաստված լավագույն օրինակներ պահպանվում են Պետական Պատմական Թանգարանում։

Արծաթյա կամ ոսկյա իրերին շքեղություն էր տալիս նաև նրանց վրա տկնեղենի ընդելուզումը։ Հայ պատմիչները իրենց աշխատություններում խոսելով ոսկյա կամ արծաթյա զարդարանքների մասին՝ բազմիցս հիշում են Յանկադին քարերով զարդարված կամարների, ապարանջանների, ականջի օղերի, ոսկեզոծ բաժակների, ափսեների, տուփերի, գլխի թասակների ու ձե-

ռագրերի կազմերի մասին։ Հայ ոսկերիչները թագավորների և իշխանների պատվերով ազնիվ մետաղները զարդարում էին թանկագին քարերով, փղոսկրով և այլ նյութերով։

Փ. Բուլանգը հիշում է «ականակապ մարգարտազարդ» ոսկյա իրերի մասին։ Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով Աշոտի մասին, գրում է. «Այլ և Աշոտոյ երիցու որգւոյ արքայի, Նորանշան իմն պատիւ յարգարեալ իբր օդապարիկ իմն երիվար գեղեցիկ զարդուք և զինուք և պերճապաճոյճ երանգս զգեստուց և կամար ականապատ ընդ մէջ ածեալ կացուցանէ զնոս իշխան հայոց»[1]։

13-րդ դարի պատմիչ Ս. Օրբելյանը Տարսայիճի մասին գրում է. «Զկամարն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք և մարգարտօք լցեալ տայր ածել ընդ մէջ նորա»[2]։

Մատենադարանի № 102 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Քանզի զտիպս աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յոսկւոյ և արծաթոյ այլև յոսկերաց փղաց և կարմիր մորթով կազմեալ...»։

Նորվանքում 989 թվականին Հովհաննես գրչի գրած մի ձեռագրի կազմը ծածկված է փղոսկրով, որը հանդիսանում է արվեստի ամենանուրբ գործերից մեկը։



Նկ. 12
1. Արծաթյա բաժակ — ինկրուստացիայով։
2. Արծաթյա արկղիկ - ինկրուստացիայով։

Հնագույն շրջանում ինկրուստացիա է կատարվել ոչ միայն արծաթի, ոսկու, այլև բրոնզի, պղնձի և կավե իրերի վրա։ Ինկրուստացիայի տեխնիկայի հնագույն նմուշներ են հայտնաբերվել 1948 թվականին Կիրովականում բացված Կուրդանից։ Միջնադարյան քաղաք Դվինի պեղումների ժամանակ գտնվել

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 198։
[2] Ս. Օրբելյան, էջ 423։

են ապարանջաններ, ականջողեր՝ զարդարված թանկարժեք քարերով։ Նման օրինակներ շատ ունենք մեր ձեռքի տակ, հատկապես՝ 18—19-րդ դարերին պատկանող կանանց գոտիներ, ճարմանդներ, կրծքի և գլխի զարդեր, որոնք ամբողջությամբ զարդարված են տարբեր դույնի թանկագին և հասարակ քարերով, մարջաններով։ Հետաքրքիր ինկրուստացիոն աշխատանք է 18-րդ դարում պատրաստված արծաթյա բաժակը, որն ունի բարձր պատվանդան, արծաթյա դաշտի վրա ամբողջ բաժակին ամրացված են կեղծ փիրուզաներ։ Միջնադարում հայ ոսկերիչները ձեռագրերի վրա նույնպես կիրառել են ինկրուստացիայի տեխնիկան։

Խոշոր նշանակություն ուներ նաև արծաթի իրերի ոսկեզօծումը։ Արծաթյա իրերը ոսկեզօծում էին մի քանի ձևով. կային իրեր, որոնք ոսկեզօծում էին թե՛ ներսից և թե՛ դրսից, իսկ շատ հաճախ ոսկեջրած իրի վրա հատուկ գրիչով փորագրում էին բուսական կամ երկրաչափական օրնամենտներ, իսկ երբ անհրաժեշտ էր լինում՝ արծաթյա իրերի վրա փորագրում էին ոսկյա տառեր կամ բուսական քանդակներ։

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ոսկերչությունը իր ձուլելու, դրվագելու, դրոշմելու (ճնշման), սևադի, արծնակիտման, ինկրուստրացիայի, ոսկեզօծման, վերջապես, թելի հյուսվածքի և հատիկավոր տեխնիկայով հին Հայաստանի զարգացած արհեստների թվին է պատկանել։ Ոսկերիչ վարպետները ոսկյա, արծաթյա զարդերի ու իրերի վրա կիրառել են թե՛ այնպիսի օրնամենտներ, որոնք համապատասխանում էին տվյալ էպոխայի ազնվական դասի պահանջներին, և թե՛ ժողովրդի աշխատանքի հետ կապված զարդանախշեր։